

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 34/8

ք.Երևան

19 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ներկայացված հաշվետվությունում տեղ գտած տեխնիկական վրիպակը ուղղելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ Ա/Ձ Միրիմ Միրիմյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Միրիմ Միրիմյանը հայտնում է, որ հաշվառված է և բնակվում է Արմավիրի մարզի, Արմավիր գյուղի 16 փ. 3 տանը, որտեղ և հաշվառված է 2012թ. որպես անհատ ձեռնարկատեր, որը նաև իր գործունեության հասցեն է: Նշված հասցեում Ա/Ձ Միրիմ Միրիմյանն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն՝ զբաղվում է վարսավիրական ծառայությամբ: Նույն հասցեում գրանցված է նաև իր հսկիչ-դրամարկղային մեքենան:

2018թ. արտոնագրային հարկի փոփոխությունների, հայտարարություն արտոնագրային հարկի տվյալների մեջ հունվար, փետրվար և մարտ ամիսների համար ներկայացված արտոնագրի հայտարարությունների մեջ թյուրիմացաբար Արմավիր գյուղի փոխարեն նշվել է Արմավիր քաղաք:

04.04.2018թ. Ա/Ձ Միրիմ Միրիմյանը դիմել է ՊԵԿ և ստացել 20.04.2018թ. թիվ 06/3-1/20731-18 պատասխանը, որի համաձայն անհրաժեշտ է սահմանված կարգով դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Միրիմ Միրիմյանը խնդրում է ընդառաջել և թույլ տալ ճշտելու սխալը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Միրիմ Միրիմյանն Արմավիրի մարզ, Արմավիր գյուղի 16 փ. տուն 3 հասցեում զբաղվում է վարսավիրական ծառայությունների մատուցմամբ և հանդիսանում է արտոնագրային վճար վճարող:

Սույն թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների համար նրա կողմից հարկային մարմին ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունների մեջ թյուրիմացաբար Արմավիր գյուղի փոխարեն նշվել է Արմավիր քաղաք:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը արտոնագրային հարկ վճարող համարվելու նպատակով մինչև գործունեություն իրականացնելու օրվան նախորդող օրը՝ անկախ այդ օրվա աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր լինելու հանգամանքից, Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություն:

Դիմում-բողոքի քննության ընթացքում հիմնավորվեց այն հանգամանքը, որ Ա/Ձ Միրիմ Միրիմյանը վարսավիրական ծառայությունների մատուցմամբ է զբաղվում Արմավիրի մարզ, Արմավիր գյուղի 16 փ. տուն 3 հասցեում, որտեղ և տեղադրված է նրա կողմից շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենան:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Միրիմ Միրիմյանի կողմից 2018թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների համար հարկային մարմին ներկայացված արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունների մեջ տեղ է գտել տեխնիկական վրիպակ, այն է՝ Արմավիր գյուղի փոխարեն նշվել է Արմավիր քաղաք: Հետևաբար, Ա/Ձ Միրիմ Միրիմյանին անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել ուղղելու տեղի ունեցած վրիպակը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ներկայացված հաշվետվությունում տեղ գտած տեխնիկական վրիպակը ուղղելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ Ա/Ձ Միրիմ Միրիմյանի դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

